ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի որոշում 2020թ. հունվարի 13-ի

ԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՄՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտի՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

նախագահ՝ Ա. Գրիգորյան

ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի որոշում 2018թ. հունվարի 24-ի № 3 նիստի

ԿԱՐԳ

ՀՀ ԿԳՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ՝ կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտի՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

նախագահ՝ Ա. Թ. Գրիգորյան

Հաստատված է ՀՀ ԿԳՆ « Արարատի
պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի 2018թ.
հունվարի 8-ի N 4 նիստում
ՀՀ ԿԳՆ ԱՊՔ-ի մանկավարժական խորհրդի
նախագահ՝ Է. Գ. Գասպարյան

ԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգի հիմքերն են «Կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 8 հուլիսի 2015թ.-ի N 752-Ն որոշումը, ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:
2. Սույն կանոնակարգը սահմանում է ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ) բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու ընթացակարգը:
3. Հավակնորդների կրթությունը բուհում կազմակերպվում է՝

   1) մինչև 2014թ. քոլեջ ընդունված հավակնորդների դեպքում՝ առկա կամ հեռակա ուսուցման երկրորդ կուրսում, եթե ուսումնառած և նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների /մոդուլների/ առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը, իսկ հետագա ժամանակաշրջանում ընդունված հավակնորդների դեպքում՝ միայն հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, եթե ուսումնառած և նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների /մոդուլների/ առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը: Առարկայական տարբերություն է համարվում նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով հաստատված, սակայն հավակնորդի կողմից չուսումնասիրված, չգնահատված առարկաների ժամաքանակների կամ մոդուլային ուսումնական ծրագրի բովանդակությամբ, համեմատությամբ առնվազն երեսուն և ավելի տոկոս կազմող տարբերությունը,

   2) վճարովի հիմունքով՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություններ ունեցող հավակնորդի՝ սույն կարգով կրթությունը շարունակելու դեպքում:
4. Հավակնորդի կրթության շարունակման գործընթացն ապահովելու համար ԵՊՀ-ի, ՀՊՏՀ-ի, ՀԱՊՀ-ի, ՀՊՄՀ-ի, ՀԱԱՀ-ի և Քոլեջի միջև կնքվել է համագործակցության համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր):

II ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ

5. Քոլեջը յուրաքանչյուր տարի, մինչև ապրիլի 1-ը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն գրավոր ներկայացնում է այն մասնագիտությունների ցանկը, որոնցով հավակնորդը կարող է շարունակել կրթությունը բուհում:

6. ՀՀ ԿԳՆ-ն բուհերի և ՄՄՈՒՀ-ների ներկայացված հայտերի հիման վրա մինչև տվյալ տարվա մայիսի 10-ը հաստատում է համապատասխան բուհում կրթությունը շարունակելու համար հատկացված տեղերի թիվը՝ ըստ հաստատությունների և մասնագիտությունների, ինչպես նաև ՄՄՈՒՀ-ներում ուսուցանվող այն մասնագիտությունների ցանկը, որոնցով հավակնորդը կարող է շարունակել կրթությունը բուհում:

7. Քոլեջը, ՀՀ ԿԳՆ-ի կողմից հաստատված ցանկի հիման վրա, երեք աշխատանքային օրվա ընթացքում, հրապարակում է քոլեջից համապատասխան բուհերում կրթությունը շարունակելու համար հատկացված տեղերի թիվը՝ ըստ մասնագիտությունների և առարկայական տարբերությունների:

8. Հավակնորդը բուհ տեղափոխվելու մասին դիմումը քոլեջի ղեկավարին է ներկայացնում պետական ամփոփիչ ստուգման քննաշրջանից առնվազն 10 օր առաջ՝ նշելով նախընտրած բուհը և նախընտրելի մինչև 2 մասնագիտություն՝ առաջին հայտի գերակայության սկզբունքով:

9. Հավակնորդների դիմումների հիման վրա քոլեջը համապատասխան բուհից հրավիրում է ներկայացուցիչ՝ ՀՀ ԿԳ նախարարի 2006 թվականի հուլիսի 21-ի N 638-Ն հրամանով ձևավորող պետական որակավորող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով:

10. Քոլեջի պետական որակավորող հանձնաժողովը պետական ամփոփիչ ստուգման արդյունքների հիման վրա կազմում է արձանագրություն և հրապարակում սույն կարգով կրթությունը բուհերում շարունակելու հավակնորդների ցանկը:

11. Հավակնորդը կամ քոլեջը փաստաթղթերը ներկայացնում է համապատասխան բուհ մինչև տվյալ տարվա օգոստոսի 30-ը:

12. Փաստաթղթերի փաթեթը ներառում է՝

1) դիմում՝ ուղղված ռեկտորին,

2) ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի պատճենը,

3) արձանագրության պատճենը,

4) չորս լուսանկար (3x4 չափսի),

5) անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

6) զինվորական գրքույկ կամ կցագրման վկայականի պատճենը: